ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2026 թվականի N 730-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, ՀՀ Ճամբարակ համայնքի ավագանու 22.04.2026 թվականի N 29-Ա որոշմամբ և ՀՀ կառավարության 09.06.2022թ. N 842-Լ և 19.03.2026թ. N 307-Լ որոշումներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրում ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված պայմաններով բնակարաններ կառուցելու նպատակով Վահան բնակավայրի 5-րդ փողոց 17 հողամաս հասցեում գտնվող 05-081-0143-0512 կադաստրային ծածկագրով համայնքի սեփականություն /վկայական 10062026-05-0013/ համարվող բնակավայրի բնակելի կառուցապատման 0.09644 հա հողամասը ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացիներ Արտակ Ապրեսյանին և Իրինա Լազարյանին:
2. Վաճառքի գին սահմանել 1 քառակուսի մետրի արժեքը հինգ հարյուր /500/ ՀՀ դրամ:
3. Քաղաքացիներ Արտակ Ապրեսյանը և Իրինա Լազարյանը պարտավոր են Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե՝ 900185067148 հաշվեհամարին որպես հողի արժեք վճարել 482.200 (չորս հարյուր ութանասուներկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հունիսի 26
ք. Ճամբարակ